**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ**
**ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

# ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՐՄՆԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ
## Ն 22

Գրանցված է Համապատասխանության
գնահատման նշանակված մարմինների
գրանցամատյանում
29 հունվարի 2018թ.
№ Ն-22(Н 22)2018
Ուժի մեջ է մինչև 26 դեկտեմբեր 2020 թ.

Սույն վկայականը հավաստում է, որ «ԷՖ-ԴԻ-ԷՅ Լաբորատորիա» ՍՊԸ փորձարկման լաբորատորիան համապատասխանում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունիսի 13-ի «Համապատասխանության գնահատման մարմինների նշանակման ընթացակարգը և չափանիշները հաստատելու մասին» N 623-Ն որոշմամբ համապատասխանության գնահատման մարմնի նշանակման համար սահմանված չափանիշներին և նշանակվել է որպես փորձարկում իրականացնող համապատասխանության գնահատման մարմին (ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի 2018 թվականի հունվարի 29-ի № 60-Ա հրաման)՝ համաձայն № 050/T-065 Հավատարմագրման վկայագրի Հավելված № I-A-ի և Հավելված № I-B-ի հավատարմագրման ոլորտներում ընդգրկված արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի ծածկագրերի և ցուցանիշների։

ՀՀ, ք. Երևան, Քանաքեռ-Զեյթուն 0037, Ձորափի փ., տ. 23.

---

էլ. հասցե: info@fdalab.am; Հեռ.: (+374 60) 46 00 76

---

(իրավաբանական անձի գտնվելու վայր, էլ. հասցե, հեռախոս, ֆաքս)

«ԷՖ-ԴԻ-ԷՅ Լաբորատորիա» ՍՊԸ փորձարկման լաբորատորիայի նշանակման ոլորտը ներառում է արտադրանքի այն տեսակները, որոնց վրա տարածվում են ստորև ներկայացված ՀՀ և ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերը՝

ՀՀ տեխնիկական կանոնակարգեր

1. ՀՀ կառավարության 2004 թվականի դեկտեմբերի 16-ի «Մակերևութաակտիվ միջոցների և մակերևութաակտիվ նյութեր պարունակող լվացող և մաքրող միջոցների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» № 1795-Ն որոշում - միայն ԵԱՏՄ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի «3402» ծածկագրի ներքո ներառված և ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերման օբյեկտ չհանդիսացող արտադրանք։
2. ՀՀ կառավարության 2004 թվականի նոյեմբերի 18-ի «Հանքային պարարտանյութերի տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» № 1692-Ն որոշում - միայն արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի «3101 00 000», «3102», «3103», «3104», «3105» ծածկագրերի ներքո ներառված և ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգերման օբյեկտ չհանդիսացող արտադրանք։

ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգեր

1.«Երեխաների և դեռահասների համար նախատեսված արտադրանքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 007/2011) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ
2.«Խաղալիքների անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 008/2011) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ
3. «Օծանելիքակոսմետիկական արտադրանքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 009/2011) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ
4.«Հացահատիկի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 015/2011) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ
5.«Սննդամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 021/2011) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ
6 «Մրգերից և բանջարեղեններից արտադրված հյութամթերքների տեխնիկական կանոնակարգ» (ՄՄ ՏԿ 023/2011) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ
7.«Ճարպայուղային արտադրանքի տեխնիկական կանոնակարգ» (ՄՄ ՏԿ 024/2011) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ
8.«Հատուկ նշանակության սննդամթերքի առանձին տեսակների, այդ թվում՝ դիետիկ բուժիչ և դիետիկ կանխարգելիչ սնունդի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 027/2012) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ
9.«Սննդային հավելումների, բուրավետիչների և օժանդակ տեխնոլոգիական միջոցների անվտանգության պահանջների մասին» (ՄՄ ՏԿ 029/2012) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ
10.«Կաթի և կաթնամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 033/2013) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ
11.«Մսի և մսամթերքի անվտանգության տեխնիկական կանոնակարգ» (ՄՄ ՏԿ 034/2013) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ
12.«Ծխախոտային արտադրանքի անվտանգության տեխնիկական կանոնակարգ» (ՄՄ ՏԿ 035/2014) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ
13. «Ձկան և ձկնամթերքի անվտանգության մասին» (ՄՄ ՏԿ 040/2016) ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Կ.Տ.

(ստորագրությունը)